«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ»
ՓԲԸ ՏՆՕՐԵՆ
_____ԱՇՈՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ
17 դեկտեմբերի 2025թ.

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2025-2026 ՈՒՍ. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿ և ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ 3
3. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ... 4
4 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 5
5 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՁևԵՐ 5
6 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ 6
7 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 6
8 ԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏևԱՆՔՆԵՐԸ 7
9 ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ 7
10 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 8

1. ՆՊԱՏԱԿ և ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Շիրակացու ճեմարանը, առաջնորդվելով իր առաքելությամբ՝ կերտել ազգային հենի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի, տեխնոլոգիաները ճանաչում է որպես ուսուցման, ուսումնառության, հետազոտության, ստեղծագործական գործունեության և դպրոցի կառավարման կարևորագույն ռեսուրս։

Ճեմարանի առաջնորդող դրույթներին համապատասխան՝ տեխնոլոգիաների օգտագործումը պետք է՝

- նպաստի ուսուցման և ուսումնառության մեջ գերազանցության հասնելուն՝ հետազոտության, համագործակցության և նորարարության միջոցով,
- խթանի էթիկական դատողությունը, պատասխանատվությունը և մտավոր սեփականության նկատմամբ հարգանքը,
- ամրապնդի հարգանքը, հոգատարությունը և ազնվությունը, որոնք Ճեմարանական համայնքի արժեքներն են
- ապահովի Ճեմարանի շենքային և տեխնիկական ենթակառուցվածքների պատասխանատու, անվտանգ և կայուն օգտագործումը։

Սույն քաղաքականությունը սահմանում է տեխնոլոգիական ռեսուրսների էթիկական, անվտանգ և նպատակային օգտագործման հստակ ակնկալիքներ Շիրակացու ճեմարանի համայնքի բոլոր անդամների համար։

2. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Սույն քաղաքականությունը վերաբերում է՝

- **Շիրակացու ճեմարանին** պատկանող բոլոր տեխնոլոգիական ռեսուրսներին, ներառյալ՝ համակարգիչներ, պլանշետներ, առդիովիզուալ սարքավորումներ, տպիչներ, սերվերներ, ցանցեր և ինտերնետ հասանելիություն,
- տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման բոլոր տարածքներին, ներառյալ՝ դասասենյակներ, տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիաներ և գրադարան,
- **Շիրակացու ճեմարանի** տեխնոլոգիական ռեսուրսների բոլոր օգտագործողներին՝ սաներին, աշխատակիցներին և այլ անձանց,
- անձնական սարքերին, եթե դրանք միացված են Ճեմարանի ցանցին կամ օգտագործվում են ճեմարանին վերաբերող նպատակներով։

Շիրակացու ճեմարանի տեխնոլոգիական ռեսուրսները ընդհանուր օգտագործման միջոցներ են և չեն ամրագրվում առանձին սաների, բացառությամբ որոշ հնարավոր դեպքերի։

3. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ և ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

3.1 Ընդհանուր ակնկալիքներ (բոլոր օգտագործողների համար)

Բոլոր օգտագործողներից ակնկալվում է, որ նրանք՝

3.1.1 տեխնոլոգիաները կօգտագործեն կրթական, ուսումնական, հետազոտական կամ վարչական նպատակներով,

3.1.2 բոլոր թվային փոխազդեցություններում կցուցաբերեն հարգալից, պատասխանատու և էթիկական վարքագիծ,

3.1.3 կհարգեն մտավոր սեփականությունը և պատշաճ կերպով հղումներ կանեն օգտագործված աղբյուրներին,

3.1.4 կպահպանեն մուտքի տվյալների գաղտնիությունը և կօգտագործեն միայն թույլատրելի համակարգեր և տվյալներ,

3.1.5 տեխնիկական խնդիրների, անպատշաճ բովանդակության կամ տեղեկատվական անվտանգության հետ կապված մտահոգությունների դեպքում անհապաղ կտեղեկացնեն համապատասխան անձանց։

3.2 Սովորողներ

Սովորողները պետք է

3.2.1 տեխնոլոգիաները օգտագործեն ուսուցիչների կամ լիազորված աշխատակիցների վերահսկողության և ուղղորդման ներքո,

3.2.2 հետևեն սարքերի օգտագործման վերաբերյալ ցուցումներին՝ ներառյալ դրանց օգտագործման ժամանակն ու ձևը,

3.2.3 տեխնոլոգիաները օգտագործեն ուսումնառությանը, հետազոտությանը և ստեղծագործական գործունեությանը նպաստելու համար՝ բացառապես կրթական նպատակներով,

3.2.4 նպաստեն անվտանգ, հարգալից և դրական թվային ուսումնական միջավայրի ձևավորմանը։

3.3 Աշխատակիցներ

Աշխատակիցները պետք է

3.3.1 տեխնոլոգիաները օգտագործեն ուսուցման, ուսումնառության, գնահատման և ճեմարանին գործունեության այլ նպատակներով,

3.3.2 վերահսկեն և ուղղորդեն սովորողների կողմից տեխնոլոգիաների օգտագործումը՝ տարիքին համապատասխան ձևով,

3.3.3 ձևավորեն պատասխանատու թվային քաղաքացիություն և ցուցաբերեն մասնագիտական վարքագիծ,

3.3.4 պահպանեն գաղտնի տեղեկատվությունը, ներառյալ՝ սովորողների վերաբերյալ տվյալները և գնահատման նյութերը,

3.3.5 թվային գործիքներ և հարթակներ օգտագործելիս ապահովեն դպրոցում գործող բոլոր համապատասխան քաղաքականությունների պահպանումը։

4 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հաշվի առնելով Շիրակացու ճեմարանի տեխնոլոգիական ռեսուրսների ընդհանուր օգտագործման են՝

4.1 բոլոր սարքավորումները պետք է օգտագործվեն խնամքով,

4.2 սարքերը օգտագործելուց հետո պետք է թողնվեն պատշաճ աշխատանքային վիճակում՝ հաջորդ օգտագործողների համար,

4.3 օգտագործողները պարտավոր են օգտագործումից հետո դուրս գալ իրենց հաշիվներից և փակել բոլոր ծրագրերը,

4.4 ոչ մի օգտագործող իրավունք չունի միայնակ տնօրինել ընդհանուր օգտագործման ռեսուրսները կամ սահմանափակել հավասար հասանելիությունը,

4.5 ցանկացած վնաս, խափանում կամ չարաշահում պետք է անհապաղ հաղորդվի ուսուցչին, գրադարանավարին կամ տեղեկատվական տեխնոլոգիաների աշխատակցին։

5 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԳԵԼՎԱԾ ՁԵՎԵՐ

Տեխնոլոգիաների օգտագործման հետևյալ ձևերը խստիվ արգելվում են՝

5.1 ապօրինի, անպարկեշտ, բռնության կոչ անող, ատելություն տարածող կամ խտրական բովանդակության օգտագործում, ստեղծում, պահպանում կամ տարածում,

5.2 կիբերբուլինգ, ոտնձգություն, սպառնալիք կամ անհարգալից թվային հաղորդակցություն,

5.3 անվտանգության վերահսկման մեխանիզմների, բովանդակության ֆիլտրերի կամ ցանցային պաշտպանական միջոցների շրջանցում, ներառյալ՝ VPN-ների, proxy-ների կամ հաքերային գործիքների օգտագործումը,

5.4 չարտոնված ծրագրերի կամ հավելվածների տեղադրում, ներբեռնում կամ օգտագործում,

5.5 Ճեմարանի տեխնոլոգիաների օգտագործում անձնական առևտրային շահի կամ քաղաքական քարոզչության նպատակներով,

5.6 սարքավորումների, ծրագրային ապահովման կամ ցանցային համակարգերի վնասում, փոփոխում կամ խաթարում,

5.7 այլ անձանց անունից հանդես գալ կամ մուտքի տվյալների փոխանցում,

5.8 չափից ավելի անձնական կամ ոչ կրթական նպատակներով օգտագործում, որը խոչընդոտում է ուսուցմանը, ուսումնառությանը կամ դպրոցական գործունեությանը։

6 ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

6.1 Շիրակացու ճեմարանում տեխնոլոգիաների օգտագործումը պետք է հիմնված լինի ակադեմիական ազնվության, ինքնուրույնության և էթիկական գիտական գործունեության սկզբունքների վրա։

6.2 Թվային գործիքները, առցանց հարթակները և արհեստական բանականության (ԱԲ) գործիքները պետք է օգտագործվեն բացառապես Ակադեմիական ազնվության քաղաքականությանը համապատասխան։

6.3 Թվային կամ արհեստական բանականության գործիքների չհայտարարված կամ չարտոնված օգտագործումը ակադեմիական աշխատանքի ընթացքում՝ ներառյալ գրագողությունը, պատվերով աշխատանքի կատարումը, տվյալների կեղծումը կամ գեներատիվ արհեստական բանականության չարաշահումը, դիտարկվում է որպես խախտում և կարգավորվում է Ակադեմիական ազնվության քաղաքականությամբ սահմանված ընթացակարգերով։

7 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Շիրակացու ճեմարանի տեխնոլոգիական ռեսուրսներն օգտագործելիս օգտագործողները չպետք է ունենան գաղտնիության ակնկալիք։

7.2 Ճեմարանն իրեն վերապահում է տեխնոլոգիաների օգտագործումը վերահսկելու, գրանցելու, ուսումնասիրելու և ստուգելու իրավունքը՝ ներառյալ ինտերնետային

ակտիվությունը, ֆայլերը և հաղորդակցությունները, սույն քաղաքականության և այլ նորմատիվ փաստաթղթերի պահպանումը ապահովելու նպատակով։

7.3 Ճեմարանին պատկանող համակարգերի միջոցով ստեղծված, պահպանված կամ փոխանցված բոլոր տվյալները հանդիսանում են Շիրակացու ճեմարանի սեփականությունը, բացառությամբ օրենքով նախատեսված այլ դեպքերի։

8 ԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Սույն քաղաքականության ցանկացած խախտում դիտարկվում է որպես ճեմարանի ռեսուրսների չարաշահում և կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության։

8.1 Սաներ

8.1.1 Սաների կողմից թույլ տրված խախտումները դիտարկվում են որպես վարքային խախտումներ և կարգավորվում են Շիրակացու ճեմարանի սաների վարքականոնին համապատասխան՝ ներառյալ փաստագրումը, կարգապահական միջոցների կիրառումը և Ճեմարանի համապատասխան կառույցների ներգրավումը։

8.1.2 Այն դեպքերում, երբ տեխնոլոգիաների չարաշահումը միաժամանակ հանդիսանում է ակադեմիական խախտում, լրացուցիչ կիրառվում են Ակադեմիական ազնվության քաղաքականությամբ (2025–2026) սահմանված կարգավորումները։

8.2 Աշխատակիցներ

8.2.1 Աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումները կարգավորվում են ներքին կարգավորումներով, աշխատանքային պայմանագրերով և այլ կիրառելի կարգերով։

9 ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Տեխնոլոգիաների պատշաճ կիրառության քաղաքականությունը **Շիրակացու ճեմարանի նորմատիվ փաստաթղթերի անբաժանելի մաս** է և պետք է մեկնաբանվի ու կիրառվի համատեղ՝

- **Շիրակացու ճեմարանի սաների վարքականոնի**,

- **Ակադեմիական ազնվության քաղաքականության**,
- վարքագծին, գնահատմանը և պաշտպանությանը վերաբերող այլ ներքին քաղաքականությունների հետ:

10 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Շիրակացու ճեմարանի տեխնոլոգիական ռեսուրսների օգտագործումը համարվում է սույն քաղաքականության և դրա բոլոր դրույթների ընդունում:

10.2 Բոլոր սաները, ծնողները/օրինական ներկայացուցիչները և աշխատակիցները պարտավոր են ծանոթանալ և պահպանել Տեխնոլոգիաների ընդունելի օգտագործման քաղաքականությունը: